# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 76

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի մայիսի 19-ին ժամը $10^{00}$-ին Պտղնիի համայնքապետարանում հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ, հետևյալ օրակարգով՝

1) Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին:

2) Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

3) Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 11-ի N 17 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 17
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 77

## ԱՊԱՅՈՒՅՄԱՆ ԲԵՌ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Կոտայքի մարզի Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի մարտի 23-ի N 36 որոշմամբ հարուցված և քննարկվող վարչական վարույթի նյութերը և համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արաքսի Մաքսիմի Հակոբյանից պահանջել վարչական մարմին ներկայացնել սեփականության իրավունքով Պտղնի համայնքում իրեն պատկանող հողամասերի վրա շենք-շինություններ կառուցելու համար տրված շինարարության թույլտվությունները և նախագծերը, հողամասերի սեփականության վկայականները, հողամասերի չափագրություն և շենք-շինությունների ներքին չափագրություն (հաստատված որակավորված անձի կողմից):
2. Քաղաքացի Մեսրոպ Արիստակեսի Խալաթյանից պահանջել վարչական մարմին ներկայացնել սեփականության իրավունքով Պտղնի համայնքում իրեն պատկանող հողամասի սեփականության վկայականը, հողամասի իրական դիրքի և դրանում առկա շինությունների հաստատված չափագրություն (հաստատված որակավորված անձի կողմից):
3. Քաղաքացի Արմեն Մաքսիմի Հակոբյանից պահանջել վարչական մարմին ներկայացնել սեփականության իրավունքով Պտղնի համայնքում իրեն պատկանող հողամասի վրա շենք-շինությունների օրինականությունը հավաստող փաստաթղթեր և (կամ) նախագծեր, հողամասի սեփականության վկայականը, հողամասի չափագրություն և շենք-շինությունների ներքին չափագրություն (հաստատված որակավորված անձի կողմից):
4. Քաղաքացի Նորայր Գառնիկի Ղայթմազյանից պահանջել վարչական մարմին ներկայացնել սեփականության իրավունքով Պտղնի համայնքում իրեն պատկանող հողամասի սեփականության վկայականը, հողամասի իրական դիրքի և դրանում առկա շինությունների (առկայության դեպքում) հաստատված չափագրություն (հաստատված որակավորված անձի կողմից):
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 17
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 78

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի մարտի 23-ի N 36 որոշումով հարուցված վարչական վարույթի նյութերը, ինչպես նաև նշված վարույթով ապացուցման բեռ բաշխելու մասին համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 17-ի N 77 որոշումը, վարույթի մասնակիցների կողմից ապացույցներ ձեռք բերելու և դրանք վարչական մարմին ներկայացնելու հանգամանքը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի մարտի 23-ի N 36 որոշումամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել մինչ վարույթի մասնակիցների կողմից ապացուցման բեռ բաշխելու մասին համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 17-ի N 77 որոշմամբ նախատեսված և վերջնական վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ ապացույցների ներկայացումը:
2. Որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով օրենքով նախատեսված ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 18
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 79

### ՊԱՊ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՐԻՍՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման N 4 հավելվածի պահանջների, հիմք ընդունելով Պապ Համլետի Հայրապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Պապ Համլետի Հայրապետյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 21-րդ փողոց թիվ 9 հասցեի (սեփականության վկայական N 15042021-07-0118, ծածկագիր 07-054-0312-0004) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում առանց շինարարության թույլտվության կատարել պարիսպի կառուցման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 20
գ.Պտղնի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 80

**ՌՈՒԴՈԼՖ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Ռուդոլֆ Նշանի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 10-րդ փողոց թիվ 9 հասցեի (սեփականության վկայական N 16092020-07-0153, ծածկագիր 07-054-0004-0011) և Կոտայքի մարզ գ. Պտղնի 10-րդ փողոց թիվ 11 հասցեի (սեփականության վկայական N 30072020-07-0006, ծածկագիր 07-054-0004-0010) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերը միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝

Կոտայքի մարզ գ. Պտղնի 10-րդ փողոց թիվ 9:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2021 թ. մայիսի 20
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 81

### ՀԱՅՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայրիկ Սիրեկանի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 18-րդ թաղամաս թիվ 2 հասցեում գտնվող 07-054-0105-0012 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ բնակելի տան և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 20
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 82

## ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Անահիտ Ալեքսանի Ավագյանի դիմումը և սեփականության վկայականը՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 36 հասցեի սեփականատեր Անահիտ Ալեքսանի Ավագյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության վկայական N 2358116, տրված 25.10.2007թ., կադաստրային ծածկագիր 07-054-0019-0007) սեփականության վկայականում նշված 1;2;3;4;5;6 համարների շինությունների քանդման թույլտվություն:
2. Քանդման աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 20
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 83

### 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար տեղամասային կենտրոն սահմանել Պտղնիի միջնակարգ դպրոցի շենքը (հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 2):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 25
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 84

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 6, 1.5քմ.

2) Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 27, 1.5քմ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 25
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 85

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 12-ի N 20 որոշումը և քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Սվետլանա Արայի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0226-0046 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 27092013-07-0040) 0.79 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ձկնաբուծական արհեստական լճակներ կառուցելու համար:
2. Սվետլանա Արայի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Պտղնի համայնքում գտնվող 07-054-0226-0046 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
3. Սվետլանա Արայի Կարապետյանին պատկանող 07-054-0226-0046 ծածկագրով 0.79 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 24-րդ փողոց թիվ 4:
4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Պտղնի համայնքի ղեկավարի տեղակալ Երջանիկ Միսակյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 25
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փողոց 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

27 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 86

## ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սամվել Հրանտի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 3-րդ փողոց թիվ 2 հասցեում գտնվող 07-054-0026-0039 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ բնակելի տան, օժանդակ շինության և տարածքի պարսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 27
գ.Պտղնի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 87

## «ՀԷՑ» ՓԲԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի դիմումը և նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տալ Սաշա Աշոտի Աղաջանյանին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 21-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 7 հասցեում գտնվող տարածքի համար 0.22 կՎ էլեկտրամատակարարման անցկացման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել «ՀԷՑ» ՓԲԸ-ին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2021 թ. մայիսի 27
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 88

## ՆԵԼԼԻ ՄԱՆԱՎՋՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Նելլի Անդրանիկի Մանավջյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 2-րդ թաղամաս թիվ 20 (կադաստրային ծածկագիր 07-054-0208-0005, սեփականության վկայական N 07082020-07-0024) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան և պարսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Նելլի Անդրանիկի Մանավջյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 27
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 89

## ՀԱՅՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայրիկ Սիրեկանի Սարգսյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 18-րդ թաղամաս թիվ 2 (կադաստրային ծածկագիր 07-054-0105-0012, սեփականության վկայական N 25032021-07-0127) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում երեք սենյականոց բնակելի տուն ձեղնահարկով և պարսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Հայրիկ Սիրեկանի Սարգսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 27
գ.Պտղնի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 90

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» 1066-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Առաքելի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2304650, ծածկագիր 07-054-0325-0002) 2.65 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության վարելահողի:
2. Սույն փոփոխությունը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2021 թ. մայիսի 31
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 91

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 90 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» 1066-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստրի միավորված ստորաբաժանման 2021 թվականի հունիսի 01-ի կասեցման որոշումը և սեփականատիրոջ դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Առաքելի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2304650, ծածկագիր 07-054-0325-0002) 2.65 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի անջրդի վարելահողի:
2. Սույն փոփոխությունը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
3. ՈՒժը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 31-ի «Քաղաքացու սեփականություն համարվող ցածրարժեք հողատեսքը բարձրարժեք հողատեսքի փոխադրելու մասին» N 90 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հունիսի 01
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 92

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գեորգի Համբարձումի Աշուղյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 4 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0122-0010) 1990 թվականին ինքնակամ կառուցված այգետնակը, ջրավազանը, օժանդակ շինությունը, սան հանգույցը և պարիսպը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Գեորգի Համբարձումի Աշուղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 4 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1990 թվականին ինքնակամ կառուցվել է 418.0 քմ մակերեսով այգետնակ, 20.9 քմ մակերեսով ջրավազան, 15.6 քմ մակերեսով օժանդակ շինություն, 4.9 քմ մակերեսով սանհանգույց և 7.0 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գեորգի Համբարձումի Աշուղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 4 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Գեուրգի Համբարձումի Աշուղյանին սեփականության իրավունքով պատկանող 1990 թվականին կառուցված 418.0 քմ մակերեսով այգետնակը, 20.9 քմ մակերեսով ջրավազանը, 15.6 քմ մակերեսով օժանդակ շինությունը, 4.9 քմ մակերեսով սանհանգույցը և 7.0 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հունիսի 02
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 93

## ՔՐԻՍՏԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Քրիստինե Վազգենի Ասատրյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 24-րդ փողոց թիվ 6 (կադաստրային ծածկագիր 07-054-0226-0060, սեփականության վկայական N 26032021-07-0123) հացեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ըստ գործառնական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասում ձկնաբուծական արհեստական լճակների, տնտեսական շինության և հենապատի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն և սեփականության վկայականում նշված ինքնակամ կառուցված 5294.3 քմ ընդհանուր մակերեսով շինությունների քանդման թույլտվություն:
2. Հանձնարարել Քրիստինե Վազգենի Ասատրյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հունիսի 03
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 94

## ԹՈՎՄԱՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Թովմաս Հայկի Սահակյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 5-րդ փողոց թիվ 14/2 (կադաստրային ծածկագիր 07-054-0019-0033, սեփականության վկայական N 25022021-07-0086) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան և պարսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Թովմաս Հայկի Սահակյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հունիսի 09
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 95

## ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայկ Դավիթի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգեզանգված 4-րդ թաղամաս թիվ 3 հասցեում գտնվող 07-054-0113-0007 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2021 թ. հունիսի 09
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 96

## ԱՐՏԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արտակ Արտոյի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 14-րդ փողոց թիվ 16 հասցեում գտնվող 07-054-0011-0009 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2021 թ. հունիսի 09
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 97

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Աշոտ Ալեքսանդրի Ավայանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 39 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0204-0039) 1991 թվականին ինքնակամ կառուցված կիսանկուղը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Աշոտ Ալեքսանդրի Ավայանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 39 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1991 թվականին ինքնակամ կառուցվել է 129.4 քմ մակերեսով կիսանկուղ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշոտ Ալեքսանդրի Ավայանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 39 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Աշոտ Ալեքսանդրի Ավայանին սեփականության իրավունքով պատկանող 1991 թվականին կառուցված 129.4 քմ մակերեսով կիսանկուղը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հունիսի 10
գ.Պտղնի

մեկնարկային գինը 140000 ՀՀ դրամ:
11) լոտ 12 կոդ 07-054-0327-0048; 1.354 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 95000 ՀՀ դրամ:
Հողամասերը սերվիտուտով ծանրաբեռնված չեն:
Գյուղատնտեսական նշանակության հողերին առկա է մոտեցման ճանապարհներ, սակայն բացակայում է ոռոգման ջուրը:
Բնակավայրերի նշանակության հողամասը ապահովված է մոտեցման ճանապարհով, առկա է էլ. Հաղորդման գիծ, գազատար և ջրագիծ:
Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանվել է հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով, իսկ աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:
Հայտերիընդունումըդադարեցվումէ 2021 թվականի հուլիսի 09-ինժամը $18^{00}$ ին:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Պտղնիի համայնքապետարան հեռ. +374 222 57070:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու կողմից հաստատված թիվ 1 լոտի մեկնարկային գինը քիչ է հաշվարկվել շուկայական արժեքից, ուստի այն չի ներկայացվում աճուրդին հետագայում գինը վերանայելու պայմանով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հունիսի 11
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 98

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 19-ի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին» N 25 որոշումը՝ *որոշում եմ.*

1. Պտղնիի համայնքապետարանի 2021 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի թիվ 106 (7547) համարում Պտղնի համայնքի կողմից հողերի աճուրդի վերաբերյալ տրված հայտարարության տեքստը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն ստորև ներկայացվող տեքստի.

ՀՀ Կոտայքի մարզի Պտղնիի համայնքապետարանը 2021 թվականի հուլիսի 14-ին ժամը $10^{00}$-ին համայնքապետարանի շենքում հայտարարում է համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդ վաճառք:

Աճուրդի է ներկայացվում՝

1) լոտ 2 կոդ 07-054-0217-0062; Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 19/1 հասցեում գտնվող 0.01866 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամաս, մեկնարկային գինը 600000 ՀՀ դրամ:

2) լոտ 3 կոդ 07-054-0330-0050; 1.6 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 110000 ՀՀ դրամ:

3) լոտ 4 կոդ 07-054-0320-0003; 0.84577 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 60000 ՀՀ դրամ:

4) լոտ 5 կոդ 07-054-0320-0002; 0.45055 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 35000 ՀՀ դրամ:

5) լոտ 6 կոդ 07-054-0320-0004; 1.53508 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 105000 ՀՀ դրամ:

6) լոտ 7 կոդ 07-054-0323-0012; 0.86 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 60000 ՀՀ դրամ:

7) լոտ 8 կոդ 07-054-0323-0013; 1.02816 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 70000 ՀՀ դրամ:

8) լոտ 9 կոդ 07-054-0330-0060; 0.3 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 22000 ՀՀ դրամ:

9) լոտ 10 կոդ 07-054-0327-0046; 0.35 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 25000 ՀՀ դրամ:

10) լոտ 11 կոդ 07-054-0332-0028; 2.00389 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,